



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պարզաբնութեալ բայր յերկների, միացեք.

# ԿԱՐՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

ՆՎԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ

ՄԵՇ ՀԵՇԱՓՈԽԱԹՔՅԱՆ 7-ԱՐՑԱԽԻ Ա.Ա.ԹՈՒ,



|         |
|---------|
| 891.99Մ |
| 4-33    |

№ 21.

Համարակարգութեալ Անհիմակ. Գավլուստամիք

19247

2011-07

391-990

4-33

Պրոլետարներ բոլոր յիրկոների, միացեք.

## ԿԱՐՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

ՆՎԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ

ՄԵՇ ՀԵՊԱՓՈԽՈՒԹՅԱՆ 7-ԱՄՅԱԿԻ Ա.ՕԹԻՎ.

1003  
13716

№ 21.

Հրատարակության Լենինակ. Գորկուարդիա

[1924]



20 MAY 2013

10723

### ՍԻՐԵԼԻ ՓՈՔՐԻԿ ԸՆԿԵՐԸ

Այսոր Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության յոթներորդ տարեդարձն ե. այսոր լըանում և ուղիղ յոթը տարի են արից, յերբ բանվորներն ու չքավոր գյուղացիները կոմունիստների ղեկավարությամբ այդ հեղափոխությունը առաջ բերին 1917 թվին:

Այդպիսի մեծ հեղափոխություն աշխարհիս յերեսին ել չի կատարվել:

Գուցե գու մտածես, թե այս բոլորը քեզ չի վերաբերում, բո խելքի բանը չե, բայց գու սխալվում ես. գու պետք ե իմանաս, վճռն ե աշխարհքի չարն ու բարին, — մարդկանցից վճռոնք են ուղիղ մտածում և հոդ տանում աշխարհքի մասին և վճռոնք ծուռը ճամրով են գնում և աշխարհքին ենքան ցալ պատճառում:

Դու չես կարող այս հարցերով չը զբաղվել, քանի վոր ամեն որ քո շուրջը տեսնում ես և հարստին, և աղքատին. գու տեսնում ես անգործին, վորը վոչինչ չի անում և կուշտ ու-

տում եւ դու տեսնում ես՝ ամբողջ որն  
աշխատագին, վորը կիսաքաղց է:

Դու գրանց մեջ ես ապրում. դու  
կարող ես և պարտավոր ես այդ հար-  
ցերով զբաղվել. ու յերբ մի քիչ էլ մե-  
ծանաս՝ մասնակցություն կունենաս  
շահագործվող և ճնշված մարդկանց հա-  
մար ուրախ կյանք ստեղծելու գոր-  
ծում:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀ

Մեղնից 8—9 տարի առաջ ամ-  
բողջ Ռուսաստանում, ինչու նաև մեր  
յերկրում, թագավորի իշխանության  
ժամանակ սարսափելի որեր եյինք ապ-  
րում. ամենքին ծեծում եյին, բան-  
տերը լցնում, ժողովարդը մեռնում եր  
բաղցից, հիվանդություններից, իշխա-  
նագորների անխիղճ վերաբերմանքից.  
Գրանք, և հարուսաները ավագակային  
պատերազմներ եյին սարքում, միլիոնա-  
վոր խեղճ մարդկանց կոտորել տալիս  
և իրանց գրպանները հարստացնում:

Բանվոր, աշխատավոր ժողովրդի  
դրությունը լավացնելու մասին չեյին  
մտածում. նրանց վերջին կոպեկը, չուլն  
ու փալասը խլում եյին իշխանագորի  
ողափին:



## ԸՆԿ. ԼԵՆԻՆ

Համաշխարհային հեղափոխական պրոլետա-  
րիատի առաջնորդը:

Այդ իշխանավորներն ելին՝ թագավորը իր մինիստրներով, չինովնիկներով, մեծ վաճառականները, կալվածատերերը (մեծ հող ունեցողները), բանկիրները, յեպիսկոպոսներն ու տերտերները, վորոնք վոչինչ չեյին անում և բանվոր-գյուղացիներին խաղաղություն, հնագանդություն ելին քարոզում, թե վերջին շապիկդ ել տուր, են աշխարհում արքայություն կզնաս. այդպիսի քարոզվ ձեռնտու յեր իշխողներին. զրա համար ել տերտերներին ու յեպիսկոպոսներին թագավորը լավ եր պահում. այդ սուտ քարոզների համար նըանց սոճիկ եր տալիս:

### Ո՞գՔԵՐ ԵՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Այդ սարսափելի դրությունը այդպիս շարունակվել չեր կարող: Վերջապիս բանվորները հավաքվում են և կազմում իրենց կուսակցությունը, վորը կոչեցին բոլշևիկների կամ կոմունիստական կուսակցություն: Այդ կուսակցությունը շարունակ կովում եր թագավորի, մինիստրների, նրանց չինովնիկների, հարուստների և տերտերների գեմ:

Կոմունիստական կուսակցությունը մտածում և աշխատում է հասարակության բարեկեցության մասին, աշխատում է, վոր հարուստ և աղքատ շնուն, վոր մարդիկ հավասար աշխատեն և հավասար լավ ապրեն, միակերպ հանգիստ վայելեն, արդարություն լինի յերկրիս վրա, Կոմունիստուքը հոչակ և ստացել մեզնից 70 տարի առաջ մեր մեծ ուսուցիչներ Մարքսի և Յնդելսի ժամանակից, Արքանց գլուծ «Կոմունիստական Մանիֆեստ» նշանավոր գրքից:

Կոմունիստական կուսակցությունն այն կուսակցությունն է, վորը դեկավարում է բանվորա-զյուղացիական մեծ հեղափոխությունը, իսկ այդ հեղափոխությունը աշխատավորությանը մեծ հաղթանակներ պարգիտեց:

Կոմունիստները հակառակորդներն ավագակային պատերազմների, վորոնք տեղի յեն ունենում հարուստների ոգտի համար:

Կոմունիստները կողմանից են և զեկավարում են քաղաքացիական պատերազմները, այսինքն բանվոր, չքաղաք, զյուղացի դասակարգի հետ միա-

նալով, կովում են հարուստ դասակարգի դեմ:

Կոմունիստները — այդ այն կուսակցությունն է, վորը կոչ ե անում բոլոր ազգերի և յերկրների բանվորներին, աշխատավորներին, վոր միանան և մի մեծ միություն կազմեն:

Ռուսաստանի կոմունիստները 1919 թ. կոչ արին բոլոր յերկրների բանվոր-աշխատավորներին՝ միանալ, այդ միությունը զլուխ յեկավ և կոչվում է Կոմունիստական ինստերնացիոնալ:


Բանվոր-աշխատավորների այս միությունից սարսափած՝ հարուստները, յեպիսկոպոսներն ու գեներալներն ել միացել են, և այժմ ամբողջ աշխարհը բաժանված է յերկու բանակների՝ բանվորների և հարուստների: Բայց բանվորների միությունը ուժեղ և և ամեն տեղ ամեն որ նոր-նոր հաղթանակներ և տանում և նրա հարվածների տակ որեցոր ջախջախվում և մեռնում և հին աշխարհը:

Դրա համար ել կոմունիստական կուսակցությանը թշնամի յեն հարուստներն ու տերտերները:

Ահա այդ կոմունիստներն ելին—  
հարյուր հազարավոր բանվորներ—վոր  
1917 թ. Ռուսաստանում առաջ բերին  
Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունը  
և հիմնեցին Խորհրդային Իշխանություն։ Այդ—բանվորների, աշխատա  
փորների իշխանությունն է, վորովհետեւ  
Խորհրդային հանրապետությունների  
բոլոր հաստատություններում ընտրու-  
թյուններին ժամանակցում են միայն  
նրանք, վորոնք ապրում են միայն ի-  
րենց, և վոչ թե ուրիշի աշխատանքով։  
«Յերկրի ամբողջ իշխանությունը  
Խորհրդակներին»—(աշխատավոր գասե-  
րի ներկայացուցիչներից ընտրված  
մարդկանց), այս միաքը առաջին ան-  
գամ 1917 թվի ապրիլին հռչակեց կո-  
մունիստների (բոլշևիկների) կուսակ-  
ցությունը՝ ընկ. Աննինի դիմումու-  
թյամբ։

### ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ամբողջ իշխանությունը Խոր-  
հրդակներին»—այս միաքը կայձակի  
արագությամբ առաջձվեց ամբողջ յեր-  
կրում, միացրեց բոլոր ուժերը, և Հոկ-  
տեմբերյան Հեղափոխությամբ կործան-



### ԸՆԿ. ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հ. Կոմ. Կուսակցության կոմիտեի  
գլուխախանատու Քարտուղար

վեց նախկին կառավարությունն ու  
սահմանվեցին նոր կարգերը, վարոնց  
մեջ ժողովուրդը, սկսեց ազատ շունչ  
քաշել և իր զիմի ու աշխատանքի տե-  
րը լինել:

Հոկտեմբերյան Հեղափոխությունը  
ազնվական դասակարգից, հոգեորական-  
ներից ու կալվածատերերից խլեց մի-  
լինավոր դեսիատին հոգերը և այդ  
ամբողջը վերադարձրեց իր տերերին—  
աշխատավորներին, վերջ տվեց միջակ-  
գային պատերազմին:

Զննեց նախկին կառավարություն-  
ների արած պարտքերը, վորոնք ծանրա-  
ցած եյին բանվորների և գյուղացինե-  
րի մեջքին:

Բանկերը, գործարանները, զավագ-  
ները, հանքերը խլվեցին հարուստնե-  
րից և տրվեցին աշխատավորներին:

Այժմ բանվորներն են վորոշում,  
թե որեկան քանի ժամ պետք է աշ-  
խատեն և ինչքան աշխատավարձ պետք  
ե ստանան (առաջ խաղեյինի քեֆից  
եր կախված, մարդկանց աշխատեցնում  
եյին նույն իսկ 14 ժամ չնչին աշխա-  
տավարձով), ամեն տեղ կազմված են  
արհեստակցական միություններ, վո-

ըոնք պաշտպանում են աշխատավորի  
իրավունքը:

Վերջ տրվեց վանքերի և հոգեորա-  
կանների իշխանությանը. հարյուր հա-  
զարավոր հողերականներ՝ մինիստրնե-  
րից ոռնիկներ ստանալով, իրենց կեղծ  
քարոզներով խարում եյին աշխատա-  
վորությանը. դրանք՝ հավաքված վան-  
քերում՝ առանց քրանելու ահազին  
հարստությունների տեր դառնալով,  
շոայլ կրանք եյին անցկացնում. այժմ  
այդ չըկա. դրանք դուրս արվեցին  
վանքերից, վոր գնան աշխատեն և ի-  
րենց աշխատանքով ապրեն. կրոնն ա-  
զատ հայտարարվեց. այժմ ով ինչ  
կրոն ուզում ե, կարող ե զավանել՝  
յեթե այնքան տգետ ե, վոր հավա-  
տում ե այդ խարերայությանը. Պե-  
տությունն այլիս ոռնիկ չի տալիս հո-  
գեորականներին, վորոնք միայն խա-  
րում են ժողովրդին իրենց կեղծ ա-  
ղոթքներով:

Դպրոցն անջատվեց յեկեղեցուց.  
Դպրոցն աղատվեց մոլորություններից,  
վոր ժողովրդին արգելում եյին իսկու-  
թյունն ու ճշմարտությունը իմանալու.  
Բանվորական որը ութ ժամ սահմանե-

րու հետևանքով, աշխատավորության  
ազատ ժամերը ավելացնու: Փոխանակ  
գինետների ու պանդոկների՝ աշխա-  
տավորության համար բացվեցին կը-  
լուբներ, դպրոցներ, կազմակերպվեցին  
հետաքրքիր գասախոսություններ: Դըպ-  
րոցների թիվը տասնապատկվեց և բո-  
լոր դպրոցների դռները լայն բացվե-  
ցին աշխատավոր ժողովրդի զավակնե-  
րի համար: Առաջ միջնակարգ դպրոց-  
ներում և համալսարաններում աղքատը  
տեղ չուներ, այժմ առաջին հերթին  
այգիսիններին են ընդունում: Ամեն  
ջանք գործ ե դրվում, վոր միանդա-  
մայն վերջ արվի վոչ միայն մանուկ-  
ների, այլ և հասակավորների անզրա-  
գիտությանը:

Հեղափոխականների՝ բանվորների  
դեկավարությամբ կազմվեց մի ուժեղ  
զորք—կարմիր բանակ — վոր ամուռ  
պաշտպանը հանդիսացավ հերափոխու-  
թյանը և իր կատարած քաջագործու-  
թյուններով ամբողջ աշխարհի ուշա-  
գրությունն ու զարմանքն ե վայելու մ:

Յեվ այսօհա, ճնշված աղքատթյուն-  
ներին աղատություն և ինքնավարու-  
թյուն տրվեց, յեղբայրական կապերով



նրանք միմյանց հետ կապվեցին, յերկրի պաշտպանությունը հանձնվեց աշխատավորներին, արտադրության միջոցներն ու գործիքները հանձնվեցին աշխատավորներին, յերկրի կառավարությունն—աշխատավորներին, ապահովագրության գործը—աշխատավորներին, ընդհանուր վերահսկողության, կոնտրոլի գործը—աշխատավորներին.

Այս բոլորն արեց 1917 թվի Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունը, իսկ այդ հեղափոխությունը ղեկավարում եր Կոմունիստական (Բոլշևիկների) կուսակցությունը.

Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները ցնցեցին անզործների, կուշտ ձրիակներների, աշխատավորությանը շահագործողների աշխարհը: Հեղափոխության կայծակները լուսավորեցին ամբողջ աշխարհի դարավոր սորուկների միտքը, ջերմ համակրանքով կապեցին Կոմունիստական (Բոլշևիկների) կուսակցության հետ. հեղափոխական կրակն այժմ բռնկված է ամբողջ աշխարհում, և ամեն տեղ մենք տեսնում ենք, վոր բանվոր դասակար-

003  
13/2



**ԸՆԿ. Ս. ԼՈՒԿԱՅԵԻՆ**  
(Ս. Սրապիոնյան)

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովովական Կոմիսարների Խորհրդի նախագահ:

ու կովի յե յելել տիրող դասակարգի  
դմ և վերջ ի վերջո հաղթելու յե:

Վողջույն քեզ, բոլոր յերկրներում  
ապստամբող պրոլետարիատ:

Կոմունիստները, քանդելով հին  
կարգերը, այս յոթը տարվա ընթաց-  
քում իրենց անդադար աշխատանքով  
ապացուցեցին, վոր ընդունակ են նաև  
կառուցելու:

Յեկ մեծ պատերազմից հոգնած,  
քայլայված մեր յերկիրը այժմ շունչ է  
քաշում, այժմ խաղաղ և մեղքաջան  
շինաբար աշխատանք և տարվում մեր  
յերկրում:

Վողջույն Հոկտեմբերյան Հեղափո-  
խության արեգակին:


### Հ Ա Յ Ա Ս Ա Ն

Սիրելի Փոքրիկ ընկեր! Այս քանի  
տողն ել ուշազրությամբ կարդա. մի  
քիչ ել ուզում եմ խոսել Հայաստանի  
մասին:

Չորս տարի յե, վոր Հայաստանի  
բանվորներն ու չքավոր դյուղացիները  
իրենց պաշտպան կոմունիստների (բոլ-  
շևիկների) զլխավորությամբ յերկրից  
խոկեցին դաշնակներին, բոլոր հին

կառավարիչներին, գորխեցին նրանց դրած կարգերը, ժողովրդին կառավարելու նոր որւնքներ ու յեղանակներ ստեղծեցին։ Կոմունիստները ամենից առաջ բանվորին ու գյուղացուն ազատեցին հարուստներին ու նրանց հլուհպատակ գործակատարներին ծառայելուց և սովետական (խորհրդային) կարգեր ստեղծեցին ու ամբողջ աշխարհի պըոլետարիտափ (բանվոր գասակարգի) հետ կապեցին, նրանց թիկունքը ապահովելով բուրժուական թալանչիներից։ Այդ եր պահանջում հայ աշխատավորության յերջանկությունը։

Տարիներ շարունակ գաշնակները՝ հային թշնամացնելով իր հարեան բուլոր ազգերի հետ, յերկիրը գժոխը դարձրին, կոստորվեցին թուրք գյուղեր, կոստորվեցին, բնաջնջվեցին հայ գյուղեր։ Հայաստանի կառավարիչները, խարված յելքուական բուրժուաների քաղցր կաթից, մոռացան աշխատավորության շահը — արյան դաշտ քշեցին աշխատավորությանը։ տարիներ շարունակ մեր յերկրում տեղի ունեցող կրութիվները, վոր զեկավարում եյին խրճիքավետ թալանչիները, բոլորովին քայ-



### ԸՆԿ. ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

(Ալ. Մարտունի)

Ա. Կ. Կ. Անգրկովկասյան Յերկրացին Կոմիտեյի Քարտուղար

քայեցին մեր ժողովրդին։ Արտաքին  
թշնամիների վասնգից ու պատճառած  
սարսափներից զատ՝ յերկրի ներքին  
անիշխանությունը, ալան-թալանը, ըս-  
պանությունները լրացնում ենին ընդ-  
հանուր պատկերը։

Այժմ այդ չկա, այժմ մեզ շրջա-  
պատող բոլոր հարեան ազգություննե-  
րի հետ բարեկամ ենք։ Այդ բավական  
չե, այժմ նրանք մեզ ոգնում են ամեն  
ինդրում, այժմ հայն ու Հայաստանում  
գարեր շարունակ ապրած և գաշնակների  
կողմից վախերիմ թշնամի ձանաշված  
թուրքը խաղաղ ապրում են իրար հետ  
կողք-կողքի։

Մեր Խորհրդային Իշխանությունը  
յերեկվա արյունաբրու մառվերիստնե-  
րին անգամ ներել ե և ստիպել խա-  
ղաղ աշխատանքով պարապել։

Տարիներ շարունակ Հայաստանի  
յերեք գյուղացուց յերկուսին կովի  
գաշտն եյին ուղարկում։ Այդ «մար-  
տիկները» ամեն գիրքերում կոտորվում  
եյին կամ լավագույն գեպքում փախ-  
շում։ Այսոր ունենք մի ուժեղ բանակ՝  
սակավաթիվ, սակայն վարժ ու դիմաց-  
կուն, վոր պատրաստ ե հետ մզելու

քոլոր հարվածները, վոր մեր թշնամիները կը հանդգնեն ուղղելու հեղափոխությանն ու աշխատավորության շահերին:

Այժմյան կարմիր բանակայինը նախկին զինվորի պես 4 տարի զորանոցում չի ապրում անտանելի պայմաններում և ապուշ ու ինվալիդ դարձած վերադառնում իր տունն ու իր տնտեսությունը քանդված դանում. — վոչ, այժմյան կարմիր բանակայինը նախ իր դռան առաջ և վարժվում զինվորական արվեստին, և յերբ զալիս ենրա հերթը, նա գնում ե շատ կարճ ժամանակով. այդ միջոցին պետությունը ապահովում ե նրա ընտանիքը, իսկ կարմիր բանակայինը, անգրագետ մտնելով բանակ, վերադառնում ե գրագետ, կրթված և քաղաքականապես պատրաստված:

Դաշնակները խանգարեցին յերկրի ամեն հաղորդակցությունը, յերկաթուղիները, քայլքայեցին մեր տնտեսությունը, խաղաղ ստեղծագործական աշխատանքը մոռացության տալով զարկ դվին ալան-թալանին և Յեվրոպայից դրկված փշրանքներով կապեցին այդ



### ԸՆԿ. Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային-Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ,

դժոխք դարձած յերկրի արնաքամ աշ-  
խատավորության աչքերը:

Աչքաթող եր արված հողագործու-  
թյունը, չեր մտածվուժ տնտեսության  
մասին, վորովհետև լացի, սգի, վորբե-  
րի և տնանկների մառւզերիստ կառա-  
փարիչները շատ լավ եյին զգում, վոր  
իրենք միուրյա թագավորներ են:

Խորհրդային իշխանությունը բժըշ-  
կեց յերկրի այդ սարսափելի վերը. —  
հողագործությունը, յերկաթուղին վե-  
րականդնեց, հողագործության և տըն-  
տեսության վրա առաջին հերթին ա-  
մենալուրջ ուշադրություն դարձեց,  
հսկայական ջանքեր գործ գնելով, Ռու-  
սաստանի ողնությամբ լիուլի ցանել  
ավեց խոպանացած դաշտերը, գործի  
զցեց գործարաններն ու արհեստանոց-  
ները, մի շարք ջրանցքներ անցկացրեց,  
անհավասար կոիվ հայտարարելով տըն-  
տեսական ֆրոնտում, կշտացրեց հա-  
րյուր հաղարափոր սովորաներ ու ամեն-  
քին խաղաղ աշխատանքի հրավիրելով՝  
մեռած յերկիրը կենդանացրեց:

Այժմ ամբողջ խոշոր առևտուրն  
աշխատավորների ծեռքն ե անցել-  
քանվորական և դյուզացիական կոռպե-

ըստիվները, սպառողական ընկերությունները մեր աշխատավորությանը ազատել են սպեկուլյանտների ձեռքից և որեցոր ավելի մեծ չափով կազատեն։

Դաշնակները հայ վարժապետին ու աշակերտին ել ելին տարիներ շարունակ կոչի գաշտ զրկում, փակելով դպրոցները։ Պատանեկությունը այլասերվել եր։ 17 տարեկանները՝ մառեցերները կապած թալանչիներ ելին դարձել, Բոլշևիկների իշխանությունը իսկույն բաց արագ բազմաթիվ գըպրոցներ և գրիչ ու թանաք, զիրք ու լըպտիր տվեց ամենքի ձեռքը։

Դաշնակցական կուսակցությունից (մեր յերկրի նախկին կառավարիչներից) այժմյան Խորհրդապային իշխանությունը ժառանգություն ստացավ Հայոստանը, վոր հրի ու սրի, լացի ու կոծի, արան-թալանի մի անիշխանական յերկիր եր, ուր պատերի տակ կոխվըստվում և սովից նվալով մեռնում ելին հաղարավոր վորբեր (միայն գըրանց թիվը յօթանասուն հազարի եր համանում)։ Այսոր փոխված և դրությունը, և այլիս չենք տեսնում առաջվագութիւնը։ Այսոր շատ և բուժված

վերքը. բանվարագյուղացիական լայն-հոգի ու անվրեժ, յեռանդուն ու խոսհեմ կառավարությունը Հայաստանի տաճշված ժողովրդին հեղափոխական կարմիր գրոշակի պաշտպանության տակ առած՝ զբաղված և շինարար աշխատանքով։

Սիրելի փոքրիկ ընկեր! Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությանն ենք պարտական, վոր մեր պետական բոլոր շրջաններում այժմ կատարվում ե մեղծաջան, անդուր, ստեղծագործական աշխատանք, և մեր ժողովուրդը, այժմ ազատ ու խաղաղ, իր աշխատանքի պատուին և վայելում, ներքին ու արտաքին սարսափիներից ազատված։

Այս խաղաղությունն ու ազատությունը պետք է թանգ գնահատենք և ամեն կերպ պաշտպանենք։ Քեզ վրա մեծ հույս և դրվում դու յես հիմքը այն ապագայի, վորի համար այնքան արյուն են թափել բանվոր դասակարգը և չըավոր գյուղացիությունը։ Դուքախավոր ես, վոր ապրում ես Խորհրդագային ազատ յերկրում, ուր կարող ես անարգել սովորել ու աշխատել

Գորպեսզի փոխարինել կարողանաս ներ-  
կա դեկագարներին:

Յեվ դու պետք ե արդարացնես  
այդ հույսը:

Կեցցե՛ Հոկտեմբերյան Մեծ Հեղա-  
փոխարյունը:

Վաղա՞ն յին համաշխառհային պրո-  
լետարյան նեղափոխության ժազող  
առեղալիքին:

Կեցցե՛ Բանվորազգութացիական  
Խորհրդային իշխանությունը:

Կեցցե՛ Կոմոնիստական համաշ-  
խառհային նեղափոխության դեկագառ-  
Կոմոնիստական կոստակությունը:

## Ի ՆՏԵՐՆԱԾԻՈՆԱԼ

—Յեիի՞ւ, ում կրամիք անիծվել ե,  
ով նոր ե, մերկ է յեվ ուրուկ:  
Արդեն վառվում են մեր ուսեր,  
արդեն կրվի յենք մենք ձգում:  
Այս հին աշխատիք կիսուենք մենք  
մինչեւ նիստեր—եվ նես  
մեր նոր աշխատիք կը հինենք մենք,  
ու վոչ ուրուկ կա, վոչ դժգոհ:

Սո ե վերջին կոխիք  
յեվ պայմանը մեր մեծ:  
Ինչերնացիոնուր  
աշխատիք կիրկե:

Վաշ-վու չի սո մեր փրկությունը,  
վոչ խենք ներուր, վոչ արտան.  
մենք պես է մեր ազատությունը  
կրենք ձրսով մեր սեփական:

Վորսեսզի օտա փառենի մեր լուծը,  
յեզ նես խվենի վողջ հողը մեր,—  
խփենի մուշենքը, սանի մեր ոժը,  
խանի յերկարը սան է դեռ:

Սա ե...

Լոկ մենի նորեց ու բանվորութեա  
Անինի անխախս մի իրավունի  
Ասել, վոր հողը մերն ե, մերն ե—  
Կորչի հարուստը բող սպանեկ,  
Յեզ յերբ պայրի մեծ փոքորիկը  
Յեզ կուս չներբ չխանան—  
Նորից յերկիրը յեզ յերկինքը  
Մերն են ու մերը կրմնան:

Սա՛ ե...



«Ազգային գրադարան



NL0401230

ԵՐԵՎԱՎԼՈՒՄԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

**ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝**

- Հ 1. Գողոցը յել կրօնակիզմի  
Հ 2. Ազգային հուցը յել կրօնակիզմի  
Հ 3. Կռանք յել կրօնակիզմի  
Հ 4. Պրոլետարակոս դասուուր  
Հ 5. Բնագիտությունն աշխատ. դպրոցով  
Հ 6. «Եվիք սպասակիցնի» (Հոկտ. 2, սոր.)  
Հ 7. Աշխատանիքի մեծ տոնը (Մայիսի 1)  
Հ 8. Հայոց թզի ծրագիր  
Հ 9. Հրանուակ առաջցիչներն յել հայրական գույքի մեջ ծրագիր  
Հ 10. «Անիշխառ կա կրօնակիզմներ»  
Հ 11. [REDACTED] «Դուքն ե աշխատանիքի դպրոցը» սր. I  
Հ 12. [REDACTED] «Աշխատանիքի դպրոցի մասնակութեազր» սր. II  
Հ 13. [REDACTED] «Աշխատանիքի դպրոց» I առժիմանին, սրբի. III  
Հ 14. «Մեր մեծ տոնը» (Հոկտ. 2եղ, սորին)  
Հ 15. Գուծնակոսի մասնակութեազրությունն  
Հ 16. Աշխատանիքի տոնը  
Հ 17. Առաջցություն կոլլեկտիվ աշխատանիքը  
Հ 18. Պատերմ ներ յել դպրոցը  
Հ 19. Եճինակությունն գրուուկ, դպրոցով  
Հ 20. Առաջին սեփականը առաջին առժիմանին նոր դպրոցով  
Հ 21. Պարզության Հոկտեմբերի